

ԱԶՔԻ ԼՈՒՅՍԻ ՊԵՍ ՊԱՀՊԱՆԵՆՔ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Անմահանալու տարբեր ձևեր գոյություն ունեն։ Մարդկանց մեծագույն մասը ձգտում է անմահության հասնել լավ և հանրօգուտ աշխատանքով՝ լինի դաշտում, գրասեղանի մոտ, հանքահորում, շինարարության վրա և այլուր։ Եվ շնորհաշատ սերունդները մասունքի նման պահում-պահպանում են այդ անունները և հասցնում հաջորդներին՝ իբրև թանկագին գանձ, իբրև ազգային մշակույթի հարստության ապացույց։

Բայց մարդկանց մի խումբ էլ կա, որ անմահանալու հեշտ ու հանգիստ ձև են գտել, այսինքն՝ «անմահանալ» ուրիշների հաշվին, «անմահանալ» կառչելով ուրիշների՝ իսկական անմահների փեշերից։

Այդպիսիները շատ չեն, բայց, ցավոք սրտի կան, և, որ արդեն աններելի է՝ ամենից շատ կան երիտասարդների շրջանում։ Սրանց հայտնաբերած ձևը խիստ պրիմիտիվ է ու տխմար։ Հավաքվում են ընկերներով, գնում որևէ պատմական հուշարձանի մերձակայքում «ուտել-խմելու», և ապա այդ հուշարձանի վրա թողնում են իրենց հիմարությունն ապացուցող որևէ մակագրություն, կամ անիմաստ մի սրամտություն, կամ փորագրում են իրենց անուն-ազգանունները։ Եվ «տղերքից» ոչ մեկը հավանորեն չի էլ մտածում, որ իրենց արածի պաշտոնական անունն է քրեական հանցագործություն, որի համար մարդկանց պատժում են, իսկ նրանց թողած մակագրությունները կարդացողների մոտ միայն զայրույթ ու զզվանք են առաջացնում։

Խոսենք փաստերով։

Գորիսից փոքր-ինչ հեռու գտնվում է հռչակավոր Տաթևը՝ պատմական մեծարժեք կոթող, որը թանկ է ու սիրելի ամեն հայի համար։ Եվ Տաթևի կենտրոնական եկեղեցու հենց մուտքի վրա կարդում ենք. «Հիշատակ գորիսեցի Հովհաննես Շալունցից. 1938թ. 29»։ Մի քիչ ներսում կարմիր յուղաներկով գրված է. «Հիշեցեք Աշոտ Պողոսյանին, Քարահունջ, 1949»։ Ավելի ներսում Մարիամ Աստվածածնի նկարն է, որը մասնագետների միաձայն վկայությամբ համարվում է իր տեսակի մեջ լավագույնը։ Եվ հենց նկարի վրա գորիսեցի Ռազմիկ Հովսեփյանը «սրամտել է»՝ գրելով. «Հիշիր մեզ, պաչեմ քեզ»։ Իսկապես որ շատ է «սրամիտ»...

Ինչի մասին է խոսում այս ամենը: Մա մեկ անգամ ևս վկայում է, որ մեզ մոտ կան մարդիկ, ովքեր չեն կարողացել հասկանալ այն հասարակ ճշմարտությունը, որ պատմական հուշարձանները համագգային սրբություններ են, հետևաբար նրանց պղծողներին պատիժ է սպասում: Խորհուրդ կտայինք Գորիսի կուսակցական-պետական կազմակերպություններին ամենայն խստությամբ զբաղվել վերոհիշյալ (և ուրիշ) չարագործների հարցերով, կիրառելով օրենքն իր ողջ անողոքությամբ, որպեսզի մեկընդմիշտ փակվեր «անմահանալ» ցանկացողների ախորժակը:

Էլ ավելի զայրացուցիչ «հիշատակների» ենք հանդիպում Էջմիածնում գտնվող Գայանե եկեղեցին դիտելիս: Յոթերորդ դարի հնություն հանդիսացող սույն կառույցը այնպիսի մի եզակի գոհար է, որով կարող է հպարտանալ այսօրվա ցանկացած քաղաքակիրթ ազգ: Եվ ներս մտնելուն պես, եկեղեցու առջևի պատի վրա կարդում ենք. «Սուրիկ Գրիգորյան, ծ. 1926 թ. Մեղրու շրջան, գյուղ Կարճեվան», սրա կողքին՝ «Լևոն Անտոնյան Գուրգենի, Երևանցի, 1926թ. ծնված, գրեց 1944 թ.», քիչ այն կողմ՝ հսկայական յուղաներկ տառերով՝ «Սարգիս Վարդանյան Աբրահամի, ծն. 1926 թ., Թալինի շրջանի Զարնջա գյուղ» և այլն:

Հետաքրքիր է, Սուրիկ Գրիգորյանը, կամ Լևոն Անտոնյանը, կամ Սարգիս Վարդանյանը, որն ի դեպ, իր հոր անունն անգամ ճիշտ գրել չգիտե, իրենց բնակարանի պատերին կգրեի՞ն իրենց անունները: Ոչ, իհարկե՝ ոչ: Ինչո՞ւ: Որովհետև դա «իրենցն», կփչանա: Իսկ պատմական հուշարձանների վրա կարելի՞ է գրել կամ փորագրել ինչ հիմարություն որ ուզում ես: Այո, իհարկե՝ այո: Ինչո՞ւ: Որովհետև դա «իրենցը» չի, փչանում է՝ թող փչանա: Մի՞թե այսպիսի եզոխտական մտածողության համար միայն պետք է պատժել մարդկանց:

Գայանե եկեղեցու հետին պատի մակագրությունները պարզապես սրտխառնոց են առաջացնում: Այստեղ, իհարկե դարձյալ յուղաներկով գրած, կարդում ենք. «Անբախտ ընկերներ. Աբրահամյան Ժ.Դ., Զատիկյան Ա.Ա., Բաբախանյան Ս.Ռ.»:

Մենք միայն կարող ենք ասել, որ Աբրահամյանի, Զատիկյանի և Բաբախանյանի ով լինելն արդեն բացահայտված է, շուտով նրանք պատասխան կտան օրենքի առջև, այնպես որ նրանց «Անբախտ ընկերներ» մակագրությունը լրիվ կհամապատասխանի իրականությանը:

Կարելի է էլի օրինակներ բերել, բայց, կարծում եմ, եղածն էլ բավական է ցույց տալու համար, որ մեր երիտասարդների մի մասին վարակած այս «անմահացավը» հանցագործություն է, որի դեմ պետք է պայքարել:

Մի քանի խոսք էլ Հնությունների պաշտպանության կոմիտեին:

Ուրախությամբ կամենում ենք արձանագրել, որ հիշյալ կազմակերպությունը վերջին շրջանում նկատելի կերպով ակտիվացրել է իր գործունեությունը: Վերակառուցվում ու վերականգնվում են Հայաստանի զանազան մասերում գտնվող հնությունները, տեսարժան վայրերը, պատմա-քաղաքական և հասարակական արժեք ներկայացնող շինությունները և այլն: Սակայն, առավել ցավով պետք է արձանագրենք, որ պարզապես ոչինչ չի արվում վերոհիշյալ բնույթի հանցագործությունները կանխելու և հանցագործներին պատժելու ուղղությամբ: Ինչի համար է «Հուշարձանները փչացնողները պատժվում են օրենքով» ահեղ նախադասությունը Կոմիտեի՝ հնությունների պատերին փակցված թիթեղների վրա, եթե այն ընդամենը մեռած տառի արժեք ունի բոլորի, և հենց իր՝ Կոմիտեի աշխատանքային կյանքում: Կարծում եմ՝ Կոմիտեն պետք է վճռական միջոցների դիմի «Անմահացավով» տառապողներին գտնելու (իսկ դա շատ էլ դժվար չի) և պատասխանատվության ենթարկելու համար, որպեսզի հնարավորինս շուտ վերանա պատմական մեծարժեք հուշարձանները պղծելու սիրահար սադրամիսների քանակը Հայաստանում: Չեմ տարակուսում, որ այս գործին սիրով ձեռնամուխ կլինեն նաև մեր պարբերականները:

Խմբագրության կողմից. Քննելով ընկ. Ս. Շտիկյանի հոդվածը, խմբագրությունը ստեղծեց հանձնաժողով՝ պատմական հնությունները փչացնողներին հայտնաբերելու համար:

Երեկոյան Երևան, 1967 թ., № 275